

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան



Տեղական Հսկողության և
Հաշվետվողականության ծրագիր (*LCAP*)
LCAP նպատակ #8-ի և #9-ի վերանայում
Ապրիլի 10, 2019

Նպատակ #8 – Բոլոր դասասենյակները ապահովել
տեխնոլոգիայով աշակերտների համար

Ընթացիկ LCAP աջակցություն
Լրացուցիչ դրամաշնորհ
Հիմնական դրամաշնորհ

Վերանայել նյութերը

Նպատակ #8.1- Պահպանել շրջանի տեխնոլոգիայի կոմիտեն՝
21-րդ դարի կրթական ռեսուրսները հետազոտելու և
առաջարկություններ անելու համար

- Դադարեցված է մինչև շրջանի տեխնոլոգիայի գլխավոր ծրագրի հաստատվելը:

Նպատակ #8.2- Դրամահավաքի միջոցներ գտնել շրջանի համակարգչային ծրագրի ռեսուրսները թարմացնելու համար

- Տարածքային հարկ

Նպատակ #8.3 – Շարունակել թարմացնել բոլոր դպրոցների և 21-րդ դարի դասասենյակների ենթակառուցվածքը՝ անթել կապով ապահովելու և ապագա թարմացման համար ֆինանսավորման ռեսուրսներ գտնելու համար

- Շրջանի դասասենյակների ենթակառուցվածքի նախագծերի 100%-ը ավարտված է:
 - Յուրաքանչյուր դպրոցի դասասենյակում տեղադրվել է. Մանրաթելային և պղնձյա մալուխներ, անջատիչներ, անթել կապ և VoIP հեռախոսներ:
 - Տեղադրվել է շրջանի տվյալների կենտրոն. Հիմնական նոր անջատիչներ, տվյալների կենտրոնի անջատիչներ, մատակարարիչներ, պահեստային սենյակներ, պաշտպանիչ համակարգ և բովանդակության գտիչ:
- Շրջանի 21-րդ դարի դասասենյակների նախագծերի 100%-ը իրականացված է.
 - Յուրաքանչյուր դասասենյակում տեղադրվել է. Նոր բարձրախոսներ, ձայնի բարձրացման համակարգ, պրոյեկտոր, AV վերահսկողության համակարգ և ուսուցչի համակարգիչ սենսորային էկրանով:
- Ապագա թարմացումը հնարավոր կլինի միայն տարածքային հարկի կամ մեկ այլ պարտատոմսի հաստատման միջոցով:

Նպատակ # 8.4 – 3 տարով ծրագիր մշակել միջնակարգ դպրոցի համացանցային դասընթացներն ընդլայնելու և Անկախ Կրթական Ակադեմիան ընդլայնելու համար

Այլընտրանքային կրթության գլխավոր ծրագիր
Կրթական գրասենյակի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 15-ին:

- Այլընտրանքային Կրթության Կոմիտեն հյուրընկալել է Ցերեկային Համայնքային Դպրոց և Անկախ Կրթության Ակադեմիա:
- Այս տարի զարնանը, կոմիտեն կհյուրընկալի Բրբենք, Բրբոզ և Մոնտերեյ միջնակարգ դպրոցները:
- Բոլոր դպրոցները հյուրընկալելուց հետո, կոմիտեն առաջարկություն կներկայացնի կրթական գրասենյակին:
- Ֆինանսական միջոցների պատճառով, մեր նպատակն է պահպանել ունեցածը, բայց ապագա աճ պլանավորել:

Նպատակ #8.5 – Գնահատել և ընդլայնել համագործակցությունը Բրբենք քաղաքի գրադարանի հետ՝ երեխաներին ավելի մեծ հնարավորություններ տալու՝ շրջանի կողմից տրված BConnectED աշակերտական քարտերը գրադարանում օգտագործելու համար

- Մինչև 2018 թվականի մայիս ամիսը, 6-րդ դասարանի 418 աշակերտ օգտվել է գրադարանի իր քարտից: Նրանք օգտվել են և դպրոցի կողմից տրված քարտերից, և գրադարանի քարտերից: Այս թիվը 25%-ի աճ է ներկայացնում անցյալ ուսումնական տարվա համեմատությամբ: Ավելի մանրամասն առաջ, 165 6-րդ դասարանցի օգտվել են դպրոցական քարտերից: Այն կազմում է ամբողջ դպրոցական շրջանի 6-րդ դասարանցիների 15%-ը, այսինքն 1086 աշակերտ:

Նպատակ #9.1- Հաղորդակցման հանձնաժողով հրավիրել՝ հաղորդակցությունը, պարզությունը և համագործակցությունը բարելավելու առաջարկություններ անելու համար

- Հաղորդակցման հանձնաժողովը ամսեկան ժողով է գումարել և այժմ ավարտում է «Հաղորդակցման 3 տարով գլխավոր ծրագիրը (2019-2021)»:
 - Որպես 1-ին քայլ, աշխատանքային խումբը, հարցաթերթիկի միջոցով, շահագրգիռ կողմերին հարցրել է, թե ինչն է աշխատում և ինչը բարելավման կարիք ունի:
 - Արդյունքների վրա հիմնվելով, աշխատանքային խմբի անդամները նախագիծ են մշակել, որը ներառում է շրջանի հաղորդակցության մեթոդները:
 - Ծրագրի մասն է կազմում գոյություն ունեցող հաղորդակցման գործիքների պահպանման արդյունավետ մեթոդները, շարունակական աշխատանք առաջարկում նոր գործիքների, ամենալավ փորձի և ռեսուրսների հետազոտման համար և ընդգծում է շարունակական բարելավում:

Նպատակ #9.2- Մշակել ծրագիր՝ համայնքին տարածքային հարկի վերաբերյալ տեղեկություն տալու համար

- QS պարտատոմսը 25,413 ձայն էր համաքել, բայց չկարողացավ հավաքել ձայների 2/3 մասը, պակասելով միայն 938 ձայն:
- Կրթական գրասենյակը մեկ այլ պարտատոմս է ուսումնասիրում 2020 թվականի քվեաթերթիկի վրա դնելու համար:

Նպատակ #9.3 – Մշակել նոր մեթոդներ՝ շրջանի նպատակների և նախաձեռնությունների իրականացումը հաղորդելու համար

- Շրջանի նպատակներն ու հիմնական արժեքների հայտարարությունը.
 - Տպագրվում և բաշխվում է ամեն տարի պատահաբար ձևաչափով, դպրոցներում և շրջանային գրասենյակում ցուցադրվելու համար:
 - Բաշխվում է նամակի չափով ԲԴՄՇ-ի բոլոր դասասենյակներում ցուցադրվելու համար:
 - Տեղադրված է ԲԴՄՇ-ի կայքում և ուղարկվում է բոլոր աշխատակիցներին ԲԴՄՇ-ի էլեկտրոնային փոստի միջոցով:
 - Մյուս ուսումնական տարվա համար, աշխատանքային ուժի առաջարկով, պետք է ներառնվի տարեկան ծանուցման մեջ:
- Հաղորդակցման մեթոդներ շրջանի նախաձեռնությունների և ռեսուրսների համար.
 - Աշխատանքային ուժի ենթակումիտեն մեկ էջ փաստաթուղթ է մշակում տարեկան ծանուցման մեջ ներառնելու համար, որը կտեղեկացնի ծնողներին շրջանի հաղորդակցման կապի տարբեր միջոցների հետ (օր. ԲԴՄՇ-ի էլեկտրոնային նորություններ, կայք, շրջանի ֆեյսբուքյան էջ, զանգահարման համակարգ, շրջանի լուրեր):
 - Վերոհիշյալ հաղորդակցման մեթոդների բարելավումը թույլ կտա շրջանին ավելի արդյունավետ կերպով տեղեկացնել շահագրգիռ կողմերին ապագա միջոցառումների, ծրագրերի և նախաձեռնությունների մասին:

Նպատակ # 9.4 – Մշակել համագործակցման գործընթաց՝
շրջանի օբյեկտների անվանման և անվանափոխման համար

- Կրթական գրասենյակը ընդունել է 7310 կրթական օբեկտները. Օբյեկտի անվանադրումը, որը ներկայացնում է շրջանի ընթացակարգերը օբյեկտները անվանադրելու համար: